ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**11 սեպտեմբերի 2024թ.** **N 6 -Ա**
**ք.Երևան**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԱՆԴԱՄԻ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ, ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻ ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի N 11-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով 13-րդ հոդվածի 6-րդ մասը, 17-րդ հոդվածի 6-րդ և 12-րդ մասերը, 21-րդ հոդվածի 11-րդ մասը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Սահմանել՝

1) նախաձեռնող խմբի անդամի և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի վկայականների ձևերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) քարոզչության կողմի լիազոր ներկայացուցչի և քարոզչության կողմի վստահված անձի վկայականների ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Վկայականները վավերացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կնիքով:

3. Վկայականի կրկնօրինակը տրամադրվում է դիմում ներկայացնելու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում: Վկայականի կրկնօրինակների վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 9-ի «Քաղաքացիական նախաձեռնության անդամներին և լիազոր ներկայացուցիչներին, քարոզչության կողմերի լիազոր ներկայացուցիչներին և վստահված անձանց տրվող վկայականների ձևերը սահմանելու մասին» N 11-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Վ.Հովակիմյան**

***Հավելված N 1***
***Հայաստանի Հանրապետության***
***կենտրոնական ընտրական հանձնաժողովի***
***2024թ. սեպտեմբերի 11-ի N 6-Ա որոշման***

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՎԿԱՅԱԿԱՆ

## ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԱՆԴԱՄ

________________________________________________

**անունը, հայրանունը, ազգանունը**

***ՀՀ ԿԸՀ կնիք***

*[նշվում է տրման ամսաթիվը]*

Ուժի մեջ է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՎԿԱՅԱԿԱՆ

## ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

________________________________________________

**անունը, հայրանունը, ազգանունը**

***ՀՀ ԿԸՀ կնիք***

*[նշվում է տրման ամսաթիվը]*

Ուժի մեջ է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում

***Հավելված N 2***
***Հայաստանի Հանրապետության***
***կենտրոնական ընտրական հանձնաժողովի***
***2024թ. սեպտեմբերի 11-ի N 6-Ա որոշման***

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

______________________________________________

**[ նշվում է հանրաքվեի դրված նախագծի (հարցի) անվանումը ]**

## ՎԿԱՅԱԿԱՆ

______________________________________________

**քարոզչության կողմի անվանումը**

## լիազոր ներկայացուցիչ

______________________________________________

**անունը, հայրանունը, ազգանունը**

***ՀՀ ԿԸՀ կնիք*** *[նշվում է տրման ամսաթիվը]*

Ուժի մեջ է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

______________________________________________

**[ նշվում է հանրաքվեի դրված նախագծի (հարցի) անվանումը ]**

## ՎԿԱՅԱԿԱՆ

______________________________________________

**քարոզչության կողմի անվանումը**

## վստահված անձ

______________________________________________

**անունը, հայրանունը, ազգանունը**

***ՀՀ ԿԸՀ կնիք*** *[նշվում է տրման ամսաթիվը]*

Ուժի մեջ է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում